

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-ԻՆ ԺԱՄԱՆ 16:00-
ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՏԵՍՉԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան
Մասնակցում էին՝

Խորհրդի անդամներ՝

Ա. Գևորգյան	ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար
Հ. Թովմասյան	ՀՀ արդարադատության նախարար
Վ. Վարդանյան	ՀՀ քաղաքաշինության նախարար
Ա. Հարությունյան	ՀՀ բնապահպանության նախարար
Մ. Վարդանյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարար
Ա. Մովսիսյան	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարար
Ա. Գրիգորյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար
Վ. Գաբրիելյան	ՀՀ ֆինանսների նախարար
Ա. Երիցյան	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար
Մ. Բադալյան	ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահ
Ա. Վարդանյան	ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի գործադիր տնօրեն
Ն. Մայիլյան	Փոքր և միջին բիզնեսի հիմնադրամի տնօրեն
Կ. Գևորգյան	Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն հիմնադրամի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար
Մ. Հակոբյան	Սպառողների ազգային ասոցիացիայի նախագահ
Լ. Յագուբյան	«Սպառողների իրավունքների պաշտպանություն» ՀԿ-ի նախագահ

Մասնակիցներ՝

Դ. Սարգսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
-------------	--------------------------------------

Հ. Դարբինյան	ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ
Կ. Մինասյան	ՀՀ Էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ
Ա. Ավետիսյան	ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ
Ա. Պողոսյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ
Կ. Արեյան	Երևանի քաղաքապետի տեղակալ
Ա. Բեյբության	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ
Լ. Հունանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ
Ռ. Վարդանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետի տեղակալ
Ե. Հովհաննիսյան	ՀՀ ընդերքի վերահսկողության տեսչության պետ
Ս. Հայրապետյան	ՀՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչության պետ
Մ. Հովհաննիսյան	ՀՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչության պետի տեղակալ
Ս. Ասիլյան	ՀՀ Էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի առաջատար մասնագետ
Գ. Պողոսյան	ՀՀ Էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի տեսչական բարեփոխումների բաժնի փորձագետ
Դ. Հարությունյան	ՀՀ Էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի տեսչական բարեփոխումների բաժնի փորձագետ
Ա. Նազարյան	ՄՖԿ-ի երևանյան գրասենյակի ներկայացուցիչ
Ս. Քրիստասատիրյան	ՄՖԿ-ի երևանյան գրասենյակի փորձագետ
Զ. Օստրոբան	ՎԶԵԲ-ի տարածաշրջանային ծրագրի ղեկավար
Ա. Գրիգորյան	ՎԶԵԲ-ի երևանյան գրասենյակի ներկայացուցիչ
Ս. Ծատուրյան	ՎԶԵԲ-ի գրասենյակի փորձագետ

1. «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ամփոփման սկզբունքային հարցերի մասին

 (Գ. Պողոսյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հավանություն տալ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերջնական լրամշակված տարբերակին.

2) հանձնարարել ՀՀ էկոնոմիկայի նախարար Տ. Դավթյանին՝

ա. ՀՀ արդարադատության նախարար Հ. Թովմասյանի հետ համատեղ լրամշակել «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը՝ հստակ ձևակերպելով տեսչական ստուգումների սահմանափակումներն ու բացառությունները՝ պաշտպանելով տնտեսավարող սուբյեկտների շահերը,

բ. ՀՀ քաղաքաշինության նախարար Վ. Վարդանյանի հետ համատեղ, ուսումնասիրելով միջազգային փորձը, հստակեցնել հատուկ կարևորագույն նշանակության օբյեկտների ցանկը և դրանց նկատմամբ լրացուցիչ տեսչական վերահսկողության հարցը դարձնել լրացուցիչ քննարկման առարկա,

գ. վերջնական լրամշակված տարբերակը ներկայացնել առաջիկա ՀՀ կառավարության նիստի քննարկմանը:

2. Հայաստանի Հանրապետության տարածքում ինքնակամ շինարարության դեմ պայքարի հիմնախնդիրների լուծման հայեցակարգի անհրաժեշտ միջոցառումների իրականացման ժամանակացույցի 8-րդ կետով ամրագրված առաջարկների մասին

 (Վ. Վարդանյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել ՀՀ քաղաքաշինության նախարար Վ.

Վարդանյանին՝

1) «Քաղաքաշինական գործունեության վերահսկողության և հսկողության մասին» ՀՀ օրենքի նախագիծը շրջանառել Տեսչական բարեփոխումների խորհրդի անդամներին և

ամփոփված տարբերակը ներկայացնել Տեսչական բարեփոխումների խորհրդի նիստի քննարկմանը.

2) քաղաքացիական ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբի համար բազային աշխատավարձի նկատմամբ կիրառվող բազմապատիկ գործակիցների ավելացման վերաբերյալ առաջարկությունը ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ 2012-2014 թվականների ՄԺԾԾ-ի շրջանակներում դիտարկելու համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ